



ԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՂԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱԿՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

1. Սույն կարգը, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» Կանոնակարգը, սահմանում է պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով դասախոսներին աշխատանքի ընդունման ընթացակարգը, սկզբունքները և պայմանները:
2. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի կարող է ընդունվել «Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման» Կանոնակարգի 2-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված պրոֆեսորադասախոսական բոլոր տարակարգերին համապատասխանող, ինչպես նաև այդ տարակարգերին ներկայացված պահանջները բավարարող անձը:

II. ՂԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱԿՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ.

3. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու հավակնորդներին (այսուհետ՝ հավակնորդ) ներկայացնում է ամբիոնը՝ թափուր ժամերի առկայության դեպքում:
4. Հավակնորդի աշխատանքի ընդունելու հարցը քննարկվում է ամբիոնի նիստում: Արձանագրության քաղվածքը համապատասխան հիմնավորումով և հավակնորդի՝ սույն Կարգով սահմանված պարտադիր փաստաթղթերով ներկայացվում են Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
5. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրելուց հետո ռեկտորատի քննարկմանն է ներկայացնում հավակնորդի թեկնածությունը:
6. Ռեկտորատի դրական որոշման դեպքում հավակնորդը դիմում է գրում Համալսարանի ռեկտորի անունով և աշխատանքային պայմանագիր է կնքում տվյալ ուսումնական տարում Համալսարանում դասավանդելու համար:

III. ՂԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱԿՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՂԱՅՄԱՆՆԵՐ.

7. Պրոֆեսորի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում:

8. Դոցենտի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և (կամ) դոցենտի գիտական կոչում:

9. Ասիստենտի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա բուհական աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ և (կամ) համապատասխան մասնագիտության գծով ավարտած լինի ասպիրանտուրա՝ հանձնելով թեկնածուական որակավորման քննությունները:

10. Դասախոսի պաշտոնում աշխատանքի հավակնորդը պետք է ունենա դիպլոմավորված մասնագետի կամ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի որակավորման աստիճան:

11. Դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվելու պարտադիր պայման է գերազանցության դիպլոմի առկայությունը կամ մասնագիտական առարկաներից գերազանց և լավ (լավ գնահատականների նվազագույն քանակով) առաջադիմությունը:

12. Հավակնորդը դիմումին կից պարտադիր ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- 1) անձնական թերթիկ՝ լուսանկարով,
- 2) անձնագրի պատճենը,
- 3) սոցիալական քարտի պատճենը,
- 4) 4 լուսանկար (3x4 չափսի),
- 5) աշխատանքային գրքույկի քաղվածքը,
- 6) ինքնակենսագրությունը,
- 7) գիտական աշխատությունների ցանկը,
- 8) վավերացված դիպլոմի պատճենը,
- 9) վավերացված դիպլոմի միջուկի պատճենը,
- 10) վավերացված գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 11) վավերացված գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը: